Առաջին ընթերցում

Կ-1225[1]-02.09.2011-ՏՀ-010/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետեյալ բովանդակությամբ նոր 137.5-րդ եւ 137.6-րդ հոդվածներով.

««*Հոդված 137.5 Երկաթուղու օտարման շերտի օգտագործման կարգի խախտումը*

1.Երկաթուղղու օտարման շերտի սահմաններում շենք-շինությունների կառուցումը,կամ բազմամյա տնկարկների (արհեստական ծառերի) տեղակայումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Անտառային զանգվածներին հարող վայրերում ցցաչոր ծառերի, թփերի, կամ գետնին ընկած չորացած ծառերի ոստերի, խշուրների, հատված մնացորդների կամ այլ դյուրավառ նյութերի կուտակումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով:

3. Գյուղատնտեսական նշանակության հողերին հարող վայրերում մոլախոտային կամ փայտաթփային բուսականության կուտակումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի չափով:

4. Հաղորդակցուղիների տեղադրման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի կառավարչի կամ սեփականատիրոջ նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Հոդված 137.6 Երկաթուղու պաշտպանական գոտու օգտագործման կարգի խախտումը

1. Երկաթուղու պաշտպանական գոտու սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված նորմների խախտմամբ շենք-շինությունների կամ ժամանակավոր ճանապարհների կառուցումը ՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

2. Երկաթուղու պաշտպանական գոտու սահմաններում ծառա- թփուտային բուսականության հատումը կամ ճիմե ծածկույթի հեռացումը,

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի չափով

3. Երկաթուղու պաշտպանական գոտու սահմաններում հիդրոլոգիական ռեժիմի անբարենպաստ փոփոխություններ կամ ռելիեֆի տարրերի կայունության խախտում (սողանքներ, լանջերի փլվածքներ, ձորակներ, լճակներ կամ հողերի ճահճացում) առաջացնող հողային աշխատանքների կատարումը.

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի չափով:

4. Երկաթուղու պաշտպանական գոտիների սահմանները եւ կիրառվող սահմանափակումները ցույց տվող նշաններ չտեղադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 244.13-րդ հոդվածում «137.4» թիվը փոխարինել «137.6» թվով:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից: